

Ֆ. Ե. Դուբիեզ (F. J. Dubiez)

ՀԱՅԵՐԵՆ ԳՐՔԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՍԵՐԴԱՍՈՒՄ XVII—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

«Համալսարանի գրադարանն ունի հայերեն գրքերի արժեքավոր հավաքածու. այդ գրքերը սկիզբ են առել ներկայումս արդեն գոյություն չունեցող հայկական եկեղեցուց. նրանց մեջ կամի տասնյակ Ամստերդամի հրատարակություններ, որոնցից մի քանիսը գեղեցիկ առանձնահատուկ կազմերի մեջ են» — ասում է չր. Ս. Պ. Բուրգերը՝ «Պատմական ցուցահանդեսի կատալոգին» (Ամստերդամ, 1925) կցված իր ներածության մեջ, Հայերեն գրքերի այդ հավաքածուի մասին բավական վարպետորեն գրել է նաև 1925 թ. Ֆրեդերիկ Մակլերը՝ *Ecole Nationale des Langues Orientales Vivantes* — ի նախկին պրոֆեսորը՝ նրա տվյալները ի մի են հավաքված մի հոդվածի մեջ, որի վերնագիրն է *«Les livres emprimes Armeniens de la Bibliothèque de l'Université d'Amsterdam»*, և որը գետեղված է *«Revue des études Armeniennes»* — ի մեջ (հատոր 6, պրակ 2, 1926, էջ 71—148)։ Հոդվածը վերջանում է հայերեն այն բոլոր գրքերի բերիոգրաֆիայով, որոնք գտնվում են Ամստերդամի համալսարանի գրադարանում։

Արդեն 1922 թ. պրոֆ. Մակլերը զբաղվում էր հայկական ձեռագրերի, այդ թվում նաև Ամստերդամի համալսարանի գրադարանում գտնվող ձեռագրերի ցուցակագրությամբ։ Դրա արդյունքները նա նույնպես ի մի է հավաքել *«Rapport sur une mission scientifique en Belgique, Hollande, Danemark et Suède...»* — ում (Փարիզ, 1924, in—8°, էջ 166—170) Պրոֆ. Ֆրեդերիկ Մակլերի հրատարակություններն ունեն ոչ միայն խոշոր գիտական արժեք մեր մայրաքաղաքի հայկական տպարանների պատմության տեսակետից, այլև նրանք հանդիսանում են միաժամանակ որպես կարևոր արդյունքներ Ամստերդամի քաղաքակրթական պատմության համար 17-րդ դարում և 18-րդ դարի սկզբի շրջանում։

Չնայելով պրոֆ. Մակլերի հիանալի աշխատանքին, մենք այնուամենայնիվ համեմատաբար քիչ բան գիտենք Ամստերդամի հայկական գաղութի և այն տպարանների մասին, որոնք 1660 թ. — իշ սկսած բավարարում էին հայերի հոգեկան պահանջները։ Ն. դր Ռոևերի (N. de Roever) *«Ուրվագծեր և պատկերներ քաղաքի պատմության և նրա նախկին բնակիչների կյանքի և բարքերի մասին»* աշխատության 3-րդ հատորի «Վաճառականություն և արդյունաբերություն» բաժնում մենք գտնում ենք մի քանի նոթեր հայ գաղութի և նրա տպարանների մասին մեր մայրաքաղաքում։ Ես ցանկանում եմ ուշադրություն հրավիրել այն բանի վրա, որ հայկական տպարանների և հարակից թեմաների մասին եղած գրականության մեջ, ընթերցողին միշտ առաջարկում են դր Ռոևերի աշխատության 1891 թ. հրատարակությունը (էջ 1—19), բայց երբեք նրա գրքի 1902 թ.ի հրատարակությունը (էջ 135—144)։ Որքան գիտեմ, դր Ռոևերը առաջին ժամանակակից հեղինակն է, որը գրել է Ամստերդամի հայկական գաղութի մասին։ Նրանից առաջ քաղաքային պատմարան Յան Վադենաարն էր, որ 1765 թ. «Ամստերդամը, նրա ծագումը, զարգացումը, պատմությունը և այլն» իր երկասիրության երկրորդ հատորում խոսել է մայրաքաղաքի

1 Սույն հոդվածի հեղինակ Ֆ. Յ. Դուբիեզը հուանդացի է, Ամստերդամի բնակիչ։ Նա աշխատում է հոլանդական պետական օդաղնացության սպասարկման գրադարանում և հեղինակ է մի շարք գրական գործերի, բերիոգրաֆիաների, գիտության և արվեստի պատմության վերաբերյալ գրքերի։ Ֆ. Դուբիեզի սույն ուսումնասիրությունը բազմաթիվ իլյուստրացիաներով հրատարակվել է Հոլանդիայի աշխարհագրական ընկերության օրգան *«Ons Amsterdam»* — ամսագրի 1961 թ. 5-րդ և 6-րդ համարներում։ «Սուրբ էջմիածին և սուրբ Սարգիս» վերնագրով, հոլանդերեն, որից նշանավոր գրականագետ Ֆ. Յուհաբերը թարգմանել է էսպերանտերեն։

Հոդվածը հայերեն հրատարակվում է առաջին անգամ, ոչ մեծ կրճատումներով։ Այն էսպերանտերենից թարգմանել և Ռ. Ս. Իշխանյանի օգնությամբ տպագրության է պատրաստել ընդ. Սիմ. Մկրչյանը, որին և խմբագրությունն իր շնորհակալությունն է հայտնում։

Հոդվածի բոլոր ծանոթագրությունները թարգմանչինն են։